



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

**ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՆՑՈԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 27(447) «21» հոկտեմբերի 2021թ.**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

	<b>ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ</b>	
561	«Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի հուլիսի 4-ի ՆՀ-79-Ն հրամանագրում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-3246-Ն հրամանագիրը....	3
	<b>ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ</b>	
562	««Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից վերամշակված բնափայտի վաճառքի և բնափայտի ու վառելիքայտի մթերման գները հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 1098-Ն որոշումը.....	4
563	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 19-ի N 198-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1100-Ն որոշումը.....	6
564	«Պետական անտառներում բնափայտի մթերման 2022 թվականի հաշվարկային հատատեղը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 1117-Ն որոշումը.....	8
565	«Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի որոշ համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների նոր հերթական ընտրությունների նշանակման մասին» ԱՀ կառավարության N 1125-Ն որոշումը.....	10
566	«Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 23-ի N 121-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 1132-Ն որոշումը.....	12
	<b>ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ</b>	
567	«Հարկադիր կատարողի համազգեստի, տարբերանշանների,	

	խորհրդանշանի նկարագրերը, դրանք կրելու և հատկացնելու կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 8-ի N 110-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ արդարադատության նախարարի N 153-Ն հրամանը.....	13
568	«Հավատարմագրման վկայագրի ձևը հաստատելու և ԼՂՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների զարգացման նախարարության 2005 թվականի նոյեմբերի 03-ի N 117 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ էկոնոմիկայի և գյուղատնտեսության նախարարի N 04-Ն հրամանը.....	21
569	«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիայի ներդիր տրամադրելու և լիցենզիայի ներդիրի գործողությունը դադարեցնելու մասին» ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի ՆՀ-37-Ա հրամանը.....	23
570	«Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարի 2018 թվականի հունիսի 25-ի N 52-Ն և 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 160-Ն հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի N 5-Ն հրամանը.....	24

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ**

**ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒԼԻՍԻ 4-Ի ՆՀ-79-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի հուլիսի 4-ի «Արցախի Հանրապետության Անվտանգության խորհրդի գրասենյակ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Արցախի Հանրապետության Անվտանգության խորհրդի գրասենյակի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» ՆՀ-79-Ն հրամանագրում (այսուհետ՝ հրամանագիր) կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1) հրամանագրի 3-րդ կետում «հավելվածի» բառից հետո լրացնել «(գաղտնի)» բառը.

2) հրամանագրի 3-րդ կետով հաստատված N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի (գաղտնի):

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում 2021 թվականի նոյեմբերի 1-ին:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2021թ. հոկտեմբերի 18

Ստեփանակերտ

ՆՀ-3246-Ն

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

13 հոկտեմբերի 2021թ.

N 1098-Ն

ք. Ստեփանակերտ

**«ԱՐՑԱԽԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՄՇԱԿՎԱԾ ԲՆԱՓՈՒՅՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՎ ԲՆԱՓՈՒՅՏԻ ՈՒ  
ՎԱՌԵԼԱՓՈՒՅՏԻ ՄԹԵՐՄԱՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Անտառային օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել «Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից վերամշակված բնափայտի վաճառքի և բնափայտի ու վառելափայտի մթերման գները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԳՆԵՐ**  
**«ԱՐՑԱՅԱՆՍԱՆՈ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**  
**ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՍՇՆԱԿՎԱԾ ԲՆԱՓՈՒՅՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՎ ԲՆԱՓՈՒՅՏԻ**  
**ՈՒ ՎԱՌԵԼԱՓՈՒՅՏԻ ՄԹԵՐՄԱՆ**

(ՀՀ դրամ)

Հ/Հ	Ծառայության անվանումը (մեկ միավորը 1 խորանարդ մետր)	Մեկ միավորի գինը (առանց ԱԱՀ)
1.	Գործափայտի վերամշակման արդյունքում ստացված կողահան տախտակի վաճառք	
ա)	կաղնու, հացենու, լոբենու	124 583
բ)	Հաճարենու	92 738
2.	Գործափայտի վերամշակման արդյունքում ստացված ոչ կողահան տախտակի վաճառք	
ա)	կաղնու, հացենու, լոբենու	105 101
բ)	Հաճարենու	78 047
3.	Բոխենու գերանի մթերում վերին անտառային պահեստ (նվազագույն գին)	25 692
4.	Բոխենու տեխնոլոգիական փայտի մթերում, բարձում, դուրս կրում (նվազագույն գին) (մինչև անտառային ներքին պահեստ)	22 500
5.	Պահեստային վառելափայտի մթերում (նվազագույն գին)	10 000
6.	Պահեստային վառելափայտի մթերում հատատեղում (նվազագույն գին)	3 282
7.	Վառելափայտի մթերում, բարձում, դուրս կրում (ներքին անտառային պահեստ միջին հեռ. 0.3կմ)	5 000
8.	Վառելափայտի մթերում թափուկից, բարձում, դուրս կրում (ներքին անտառային պահեստ միջին հեռ. 0.3կմ)	3 625
9.	Հաճարենու գերանի մթերում (նվազագույն գին)	46 307
10.	Կաղնու, հացենու, լոբենու գերանի մթերում (նվազագույն գին)	60 307

**ԱՐՑԱՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ**  
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**  
**ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2021թ.

N 1100-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՂՐԻԼԻ 19-Ի N 198-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 19-ի «Պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների տրամադրման կարգը, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների օգտագործման ժամկետները հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 15-ի N 287 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 198-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 4-րդ կետում «տարիքային կենսաթոշակատուներին» բառերը փոխարինել «63 տարին լրացած անձանց, արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձանց» բառերով.

2) 5-րդ և 20-րդ կետերում «կենսաթոշակային տարիքը» բառերը փոխարինել «63 տարին» բառերով.

3) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Պարագաները, բացառությամբ սայլակների և լսողական սարքերի, տրամադրում է Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) համակարգում գործող կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն):

Սայլակները տրամադրում են նախարարության աշխատակազմի «Միասնական սոցիալական ծառայություն» գործակալության (այսուհետ՝ գործակալություն) տարածքային բաժինները (այսուհետ՝ տարածքային բաժին), իսկ սույն կարգի 6.1-ին կետում նշված դեպքում՝ «Քերոլյան Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ տարածքային բաժնի կողմից տրված տեղեկանքի հիման վրա: Լսողական սարքերը տրամադրում է նախարարությունը:».

4) 6-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին կետ.

«6.1. Նախարարության կողմից սայլակները կարող են տրամադրվել «Քերոլյան Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ հաշմանդամի առողջական վիճակից ելնելով սայլակի ձևի և չափի ընտրության համար նրան մասնագիտական օգնություն ցուցաբերելու նպատակով:».

5) 7-րդ կետում «բժշկասոցիալական փորձաքննության կենտրոնը (այսուհետ՝ կենտրոն), իսկ տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձանց» բառերը փոխարինել «աշխատակազմի բժշկասոցիալական փորձաքննության գործակալությունը (այսուհետ՝ ԲՄՓ գործակալություն), իսկ 63 տարին լրացած անձանց, արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձանց» բառերով.

6) 10-րդ կետում «կենտրոնը» բառը փոխարինել «ԲՄՓ գործակալությունը» բառերով.

7) 18-րդ կետում «տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձանց» բառերը փոխարինել «63 տարին լրացած անձանց, արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձանց» բառերով.

8) 18.1-ին կետում «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի» բառերով.

9) 20-րդ կետում «բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի» բառերը փոխարինել «ԲՄՓ գործակալության» բառերով.

10) 21-րդ, 26-րդ և 28-րդ կետերում «գործակալություն» բառը և նրա համապատասխան հոլովածները փոխարինել «տարածքային բաժին» բառերով և նրանց համապատասխան հոլովածներով.

11) 21-րդ կետում «հաշմանդամության վկայականը» բառերը փոխարինել «բժշկասոցիալական փորձաքննական որոշման մասին տեղեկանքը» բառերով.

12) 28-րդ կետում «Կենտրոնը» բառը փոխարինել «ԲՄՓ գործակալությունը» բառերով.

13) 28-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 28.1-ին կետ.

«28.1. Սույն կարգի 6.1-ին կետում նշված դեպքում «Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը մինչև յուրաքանչյուր ամսվա 5-ը տարածքային բաժին է ներկայացնում տեղեկատվություն՝ նախորդ ամսում սայլակ ստացած հաշմանդամների մասին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ սույն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետի գործողությունը տարածվում է 2021 թվականի հուլիսի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

19 հոկտեմբերի 2021թ.

N 1117-Ն

ք. Ստեփանակերտ

**ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ ԲՆԱՓՍՅՏԻ ՄԹԵՐՄԱՆ  
2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՏԱՏԵՂԸ  
ՀԱՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Անտառային օրենսգրքի 6-րդ հոդվածի «գ» կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել պետական անտառներում բնափայտի մթերման 2022 թվականի հաշվարկային հատատեղը՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը՝ պահանջարկի դեպքում թույլատրել սույն որոշմամբ հաստատված ծավալները, 2023 թվականի հաշվարկային հատատեղի հաշվին, գործափայտի մասով ավելացնել մինչև 15 տոկոսի չափով, վառելափայտի մասով՝ մինչև 20 տոկոսի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**



Հավելված  
Արցախի Հանրապետության կառավարության  
2021 թվականի հոկտեմբերի 19-ի N1117-Ն որոշման

**ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ ԲՆԱՓԱՅՏԻ ՄԹԵՐՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՏՍԵՂ**

Հ/Հ	Հատման տեսակը	Ընդհանուր ծավալը	Այդ թվում՝ գործափայտ							Այդ թվում՝ վառելափայտ խ.խ.մ
			Ընդհանուր ծավալը	Ըստ ծառատեսակների						
				Կաղնի	Հաճարենի	Հացենի	Լորենի	Բոխի	Թխկի. Թեղի	
1	Անտառվերականգնման հատում	8 000	5 000	250	3 000	150	100	1 500	-	3 000
2	Խնամքի հատում	20 950	950	150	-	-	-	800	-	20 000
3	Սանիտարական հատում	18 950	1 950	150	1500	100	100	100	-	17 000
	<b>Ընդամենը</b>	<b>47 900</b>	<b>7 900</b>	<b>550</b>	<b>4 500</b>	<b>250</b>	<b>200</b>	<b>2 400</b>	<b>-</b>	<b>40 000</b>

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՅԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

20 հոկտեմբերի 2021թ.

N 1125-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՅԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՈՐՈՇ  
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ  
ՆՈՐ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ընտրական օրենսգրքի 140-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի որոշ համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների նոր հերթական ընտրությունների օր նշանակել 2021 թվականի դեկտեմբերի 10-ը:

2. Հաստատել Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի համայնքների ցանկը, որոնցում կանցկացվեն նոր հերթական ընտրություններ՝ համաձայն հավելվածի:

3. Արցախի Հանրապետության պետական կառավարման մարմինների, նրանց տարածքային մարմինների և շրջանների վարչակազմերի ղեկավարներին՝ անհրաժեշտ աջակցություն և օգնություն ցուցաբերել Արցախի Հանրապետության կենտրոնական, տարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովներին՝ տեղական ինքնակառավարման մարմինների նոր հերթական ընտրություններն օրենքով սահմանված կարգով և կազմակերպված անցկացնելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՅԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Ց Ա Ն Կ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ,  
ՈՐՈՆՑՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ ՏԵՂԱԿԱՆ  
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆՈՐ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Համայնքը		Ընտրվող մարմինը
		Համայնքի ղեկավար
<b>Մարտունու շրջան</b>		
1	Մարտունի	Համայնքի ղեկավար
2	Գիշի	Համայնքի ղեկավար

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

21 հոկտեմբերի 2021թ.

N 1132-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021  
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի N 121-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ ու մ է**:

1. Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 23-ի «Արցախի Հանրապետության Նախագահի 2021 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի մասին» N 121-Ն որոշման հավելվածի 65-րդ և 66-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**2021 թվականի հոկտեմբերի 14-ի**

**ՀԱՐԿԱՂԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԻ, ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆՆԵՐԻ, ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԻ ՆԿԱՐԱԳՐԵՐԸ, ԴՐԱՆՔ ԿՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի N 110-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**N 153-Ն**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

Ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» օրենքի 28-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածներով՝

**ՀՐԱՄԱՑՈՒՄ ԵՄ՝**

1. Հաստատել հարկադիր կատարողի՝

1) համազգեստի, տարբերանշանների, խորհրդանշանի նկարագրերը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) համազգեստը կրելու և հատկացնելու կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 8-ի «Հարկադիր կատարողի համազգեստի, ուսադիրների տարբերանշանների, խորհրդանշանի նկարագրերը, դրանք կրելու և հատկացնելու կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարի 2005 թվականի փետրվարի 18-ի թիվ 18 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 110-Ն հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ**

2021 թվականի հոկտեմբերի 14  
ք. Ստեփանակերտ

**ՆԿԱՐԱԳՐԵՐ**  
**ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ ՀԱՄԱԶԳԵՍԻ, ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆՆԵՐԻ, ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԻ**

**1. ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԶԳԵՍԸ**

1. Գլխարկը սև կտորից է, սև թավշյա գլխարկաբուրքով, գլխարկագագաթի և գլխարկաբուրքի եզրով ոսկեգույն (դեղնավուն), 2,5մմ եզրաշերտով: Գլխարկաբուրքի վրա երկու ոսկեգույն կոճակներով ամրացվում է ցանցահյուսազարդով երկշերտ հյուսված կապը (քուղը) և ոսկեգույն գլխարկանշանը: Գլխարկանշանը ոսկեգույն է, կաղնու տերևներով երիզված Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով, ամրացվում է գլխարկի կենտրոնում: Գլխարկահովհարը սև է, լաքապատ:

2. Բարձրագույն խմբի հատուկ կոչում կամ դասային աստիճան ունեցող աշխատակիցների գլխարկահովհարից վերև գլխարկաբուրքի վրա, բացի ոսկեգոծ լարահյուսից և Արցախի Հանրապետության զինանշանից, ամրացվում (ասեղնագործվում) է կաղնու ճյուղերի տեսքով երկու համաչափ ոսկեկար զարդ:

3. Պիլոտկան սև կտորից է, բաղկացած երկարացված հատակի 2 մասից, 2 պատից և կենտրոնական մասում իրար վրա ծավոլող 2 փեշիկից: Վերծավված եզրակարերը դեղին են, ձախ կողմում 3 օղանցքով: Առջևի կենտրոնական մասում ամրացվում է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության գլխարկանշանը:

4. Կեպին բամբակյա է, ամառային սև կտորից՝ բաղկացած թասակից և երկարացված գլխարկահովհարից: Երկու կողմից ունի օղանցքեր: Առջևի կենտրոնական մասում ամրացվում է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության գլխարկանշանը՝ ոսկեգույն կաղնու տերևներով երիզված:

5. Տարազաբաճկոնն (Ձև 3 կցվում է) առաջատար խմբի պաշտոն զբաղեցնող աշխատակիցների կամ արդարադատության լեյտենանտից-կապիտան կոչում ունեցող աշխատակիցների համար միակոճկուն է՝ Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով 4 ոսկեգույն կոճակներով, մարմինը կիսագրկող, հարթ մակերեսներով, հետծավված օձիքով և սովորական երկկարանի թևքերով, թիկնամասի ներքևում՝ կտրվածքով: Տարազաբաճկոնն աջ և ձախ կողմերից ունենում է կափույրով ծածկվող կտրվածքով գրպաններ, իսկ կրծքի ձախ մասում՝ կտրվածքով գրպան: Բարձրագույն և գլխավոր խմբի կամ արդարադատության մայրից-գնդապետ կոչում ունեցող աշխատակիցների համար՝ երկփեշկանի, երեք կոճականի տարազաբաճկոն է, թիկնամասի ներքևում՝ առանց կտրվածքի:

6. Բարձրագույն և գլխավոր խմբի աշխատակիցների համազգեստը կարվում է սև գույնի գաբարդինից, իսկ առաջատար խմբի աշխատակիցներինը՝ սև կտորից:

7. Արդարադատության լեյտենանտից-գնդապետ կոչում ունեցող աշխատակիցների տարազաբաճկոնը սև կտորից է, որի օձիքը և թևածալքերը ոսկեգույն (դեղնավուն) եզրաշերտով են՝ 2,5մմ լայնությամբ թևածալքերի վրա երեք կոճակով:

8. Հանովի ուսադիրներով բաճկոնը (Ձև 3 կցվում է) սև գույնի կտորից է, մետաքսյա աստառով: Առջևի մասում կոճկվում է կայծակաճարմանդով (շղթա), 4 կոճակով կոճկվող գաղտնակար հանգույցով: Թիկնամասը և լանջափեշերը կրծքամասում և թևքերը թեզանիքներով կտրվածքով են, միացման տեղերով անցնում է 2,5մմ լայնքով դեղին երիզ (կանտ), 2 ներկարված կողային գրպան: Բաճկոնի ուսերին տեղադրված են ուսադիրների ամրակներ, ուսադիրները հանովի են: Բարձրագույն խմբի հատուկ կոչում կամ դասային աստիճան ունեցող աշխատակիցների բաճկոնի օձիքը դեղին 2,5 մմ եզրաշերտով է: Օձիքի վրա ասեղնագործվում է ոսկեգոծ թելերով կաղնու ճյուղեր (Ձև 3 կցվում է):

9. Ազատթող փողքերով տաբատը սև կտորից է, ուղիղ, առանց ծալքերի, ոսկեգույն (դեղնավուն) եզրաշերտով:

10. Կոշիկները (կիսակոշիկները) սև գույնի են, բարձրագույն և գլխավոր խմբի հատուկ կոշուկ ունեցող աշխատակիցներինը՝ այծակաշվե (շերոյե), իսկ առաջատար խմբի հատուկ կոշուկ ունեցող աշխատակիցներինը՝ քրոմակաշվե:

11. Վերնաշապիկը սպիտակ է, կոշտ օձիքով: Որպես ամառային համազգեստ տարազաբաճկոնի և բաճկոնի փոխարեն տրվում է վերնաշապիկ՝ երկար ու կարճ թևքերով, և կարճ թևքերով շապիկ: Փողկապը սև գույնի է:

12. Սպիտակ կարճաթև շապիկը տրիկոտաժից (60-70% բամբակյա) է, հանովի կոշտ ուսադիրների ամրակով, առաձգական օձիքով: Առջևի մասում ունի բացվածք, որը կոճկվում է 3 սպիտակ կոճակներով: Շապիկի փեշերը երկտակ առաձգական գործվածքով են, ձախ կրծքավանդակին 14,5սմ x 12սմ չափերով, ներսից կոճկվող (կոճակը չերևացող) ներկարված գրպանով: Ուսադիրների մասը պատված է սպիտակ կտորով: Կանանց շապիկը կոճկվում է դեպի ձախ: Կարճաթև վերնաշապիկի և շապիկի բացվածքի վերին մասը 5-7սմ է, չի կոճկվում:

13. Կիսաբրդյա շապիկը ձմեռային է, սև գույնի, ուսերը և թևքերի արմունկի մասը պատված են սև կտորով: Օձիքը շրջանաձև բացվածքով է, հավաքովի գործվածքով: Ձախ կրծքավանդակին շերտակարով վրադիր կափույրով գրպան է՝ 14,5սմ x 12սմ չափերով: Հանովի, կտորից ուսադիրները՝ մեկ կոճակով կոճկվող ուսադիրների համար լեզվակով են: Գրպանի և ուսադիրների լեզվակի կոճակները սև մետաղական են:

14. Բամբակյա շապիկ (60-70%) գարնանային-աշնանային է, օձիքը շրջանաձև բացվածքով: Ձմեռային, աշնանային և ամառային շապիկների փեշերը և թևքերի փեղկը երկտակ են և առաձգական-ձգվող: Գարնանային-աշնանային շապիկը կրում են միայն բաճկոնի հետ:

15. Աշնանային-ձմեռային կիսավերարկուն (Ձև 4 կցվում է) սև անջրանցիկ (անջրաթափանց) կտորից է, ուղիղ ուրվագծով, ձախ լանջափեշը 5 կոճակով կոճկվող գաղտնակար հանգույցով, հանվող տաք ներդիրով, որն ամրացվում է կայծակաճարմանով, արհեստական մորթուց հանովի օձիքով և գլխանոցով: Թիկնամասը և լանջափեշերը կրծքամասում կտրվածքով են: Միացման տեղով անցնում է 2,5 մմ լայնքով դեղին երիզ: Թևքերը երկկարանի են: Երկու լանջափեշի վրա թեք ներկարված գրպաններ են: Աստառը մետաքսյա, ձախ կողմում ծոցազրպանով: Գոտկատեղում և ներքևում առկա է թաքնված գոտկապարան: Ուսադիրները հանովի են:

16. Կանանց համար տարազաբաճկոնի և կիսավերարկուի ձևը նույնն է, կոճկվում է դեպի ձախ, տրվում են կիսաշրջագեստ, տաբատ և կոշիկներ:

17. Համազգեստի ձախ թևքին կարվում է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության խորհրդանշանը, աջ թևքին Արցախի Հանրապետության դրոշմը:

18. Բարձրագույն խմբի աշխատակիցները կրում են նաև երկփեղկանի վերարկու 3 գույզ ոսկեգույն կոճակներով, բնական կարակուլե օձիքով, թիկնամասի ներքևում կտրվածքով, սև գույնի դրապից: Ուսադիրները կարովի են: Վերարկուի օձիքը և լանջափեշերը 2,5 մմ դեղնավուն եզրաշերտով են:

19. Ուսադիրները կրում են վերնաշապիկի, տարազաբաճկոնի, բաճկոնի, կիսավերարկուի և վերարկուի վրա:

## **2. ՀԱՏՈՒԿ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՈՒՍԱԴԻՐՆԵՐԸ**

20. Հատուկ կոշումների ուսադիրը իրենից ներկայացնում է ձգված վեցանկյուն, երկարավուն գուգահեռ կողմերով, որի ներքևի վերջնամասում ուղղանկյուն է, իսկ վերևինը վերջանում է ստորին եզրին գուգահեռ բութանկյուն կտրվածքով: Ուսադիրի երկարությունը 110-140սմ է, լայնությունը՝ բարձրագույն խմբի հատուկ կոշում ունեցող անձանց համար 45սմ է, իսկ գլխավոր և առաջատար խմբերի հատուկ կոշումներ ունեցողներինը՝ 40սմ: Ուսադիրների եզրերը, բացի ստորինից, երիզվում են ոսկեգույն թելերով գործվածքով: Ուսադիրները պատրաստվում են սև գույնի գործվածքից, մահուղի աստառի վրա: Հանովի ամառային ուսադիրները ամրացվում են մեկական ոսկեգույն կոճակով: Բարձրագույն խմբի վրադիր վերնաշապիկի ուսադիրները պատրաստվում են արծաթյա թելից:

## **3. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ, ԳԼԽՎՈՐ ԵՎ ԱՌԱՋԱՏԱՐ ԽՄԲԻ ՀԱՏՈՒԿ ԿՈՉՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՈՒՍԱԴԻՐՆԵՐԸ**

21. Արդարադատության գնդապետի, փոխգնդապետի և մայորի ուսադիրների վերին հատվածում տեղադրվում է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության խորհրդանշանը, ներքևի հատվածում տեղադրվում են ոսկեգույն հնգաթև աստղեր՝ 20մմ տրամագծով:

22. Արդարադատության կապիտանի, ավագ լեյտենանտի և լեյտենանտի ուսադիրների վերին հատվածում տեղադրվում է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության խորհրդանշանը, ներքևի հատվածում՝ ոսկեգույն հնգաթև աստղ՝ 13 մմ տրամագծով:

**4. ՂԱՏԱՎՈՐ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ  
ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԸ**

23. Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության խորհրդանշանը էլիպսաձև է, բարձրությունը 97մմ, լայնությունը 85մմ, կարվում է վերնաշապիկի, բաճկոնի, կիսավերարկուի և վերարկուի ձախ թևքին՝ ուսակարից 70մմ ներքև:

24. Խորհրդանշանը՝ ոսկեգույն արծիվ է, որի մագիլների մեջ տեղադրված է կապտավուն գիրք բացված վիճակում, կշեռքի նժարների սպիտակ պատկերով: Արծվի հետևի պլանում պատկերված է սպիտակ սուր: Պատկերը եզրագարդված է ստորին մասի ժապավենից մինչև արծվի թևերի միջնամասը հասնող ոսկեգույն կաղնու տերևներով: Արտաքին շրջանագծում ոսկեգույն տառերով գրված է՝ «ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-ԱՐՑԱԽ»:

Հավելված N 2  
Արցախի Հանրապետության արդարադատության  
նախարարի 2021 թվականի  
հոկտեմբերի 14-ի N 153-Ն հրամանի

**ԿԱՐԳ  
ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏԸ ԿՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ**

	Անվանումը	Քանակը	Կրելու և հատկացնելու ժամկետը
	1	2	3
<b>1. Բարձրագույն խմբի հատուկ կոչումներ ունեցողների համար</b>			
1.	գլխարկ՝ կարակուլե բնական մորթուց	1 հատ	5 տարի
2.	գլխարկ՝ սև	1 հատ	3 տարի
3.	կեպի՝ բամբակյա, ամառային սև կտորից	1 հատ	2 տարի
4.	վերարկու՝ ձմեռային կարակուլե օձիքով, սև	1 հատ	5 տարի
5.	վերարկու՝ բրդյա, զարնանային-աշնանային	1 հատ	5 տարի
6.	տարագաբաճկոն՝ երկփեղկանի, սև գույնի գաբարդինից	1 հատ	3 տարի
7.	բաճկոն՝ սև գույնի (հանովի ուսադիրներով)	1 հատ	3 տարի
8.	բաճկոն՝ աշնանային-ձմեռային, սև, անջրանցիկ կտորից	1 հատ	3 տարի
9.	շապիկ՝ սև գույնի, կիսաբրդյա, հարթ գործվածքով, օձիքը կլոր տրվածքով, երկարաթև, ուսադիրների ամրակներով	1 հատ	1 տարի
10.	շապիկ՝ սև գույնի, բամբակյա (60-70% բամբակի պարունակությամբ), հարթ գործվածքով, օձիքը կլոր կտրվածքով, երկարաթև	1 հատ	2 տարի
11.	տաբատ՝ սև կտորից	2 հատ	2 տարի
12.	վերնաշապիկ՝ սպիտակ երկարաթև	1 հատ	1 տարի
13.	շապիկ՝ սպիտակ, կարճաթև, տրիկոտաժից (60-70% բամբակյա)	2 հատ	2 տարի



14.	վերնաշապիկ վրադիր՝ սպիտակ, երկար թևերով	1 հատ	1 տարի
15.	վերնաշապիկ վրադիր՝ սպիտակ, կարճ թևերով	2 հատ	2 տարի
16.	փողկապ՝ սև գույնի	1 հատ	2 տարի
17.	կոշիկ՝ սև, այծակաշվե (շերոյե)	1 գույգ	2 տարի
18.	կիսաճոքավոր կոշիկ (ձմեռային)	1 գույգ	2 տարի
19.	կաշնե՝ սպիտակ	1 հատ	3 տարի
<b>2. Գլխավոր և առաջատար խմբերի հատուկ կոչումներ ունեցողների համար</b>			
1.	գլխարկ՝ արհեստական մորթուց սև գույնի	1 հատ	5 տարի
2.	գլխարկ՝ սև գույնի	1 հատ	3 տարի
3.	կեպի՝ բամբակյա, ամառային սև կտորից	1 հատ	2 տարի
4.	պիլոտկա՝ սև կտորից (կանանց համար)	1 հատ	2 տարի
5.	տարազաբաճկոն՝ երկփեղկանի, սև կտորից (գլխավոր խմբի համար)	1 հատ	3 տարի
6.	տարազաբաճկոն՝ միակոճկուն, սև կտորից (առաջատար խմբի համար)	1 հատ	3 տարի
7.	բաճկոն՝ սև գույնի (հանովի ուսադիրներով)	1 հատ	2 տարի
8.	կիսավերարկու (աշնանային, ձմեռային) սև, անջրանցիկ կտորից, արհեստական մորթուց օձիքով	1 հատ	3 տարի
9.	շապիկ՝ սև գույնի, կիսաբրդյա, հարթ գործվածքով, օձիքը կլոր կտրվածքով, երկարաթև, ուսադիրների ամրակներով	1 հատ	1 տարի
10.	շապիկ՝ սև գույնի, բամբակյա (60-70% բամբակի պարունակությամբ), հարթ գործվածքով, օձիքը կլոր կտրվածքով, երկարաթև	1 հատ	2 տարի
11.	տաբատ՝ սև կտորից	2 հատ	2 տարի
12.	կիսաշրջագետտ (կանանց համար)	1 հատ	1 տարի
13.	վերնաշապիկ վրադիր, սպիտակ, երկար թևերով	2 հատ	2 տարի
14.	վերնաշապիկ վրադիր, սպիտակ, կարճ թևերով	2 հատ	1 տարի
15.	փողկապ՝ սև գույնի	1 հատ	1 տարի
16.	կոշիկ՝ սև (քրոմակաշվե)	1 գույգ	1 տարի
17.	կիսաճոքավոր կոշիկ (ձմեռային)	1 գույգ	2 տարի

### **Ծանոթություն**

Խորհրդանշանը, գլխարկանշանը, ուսադիրները, աստղերը՝ մեծ և փոքր, կոճակները՝ մեծ և փոքր, երկշերտ հյուսված կապը (քուղը), տրվում են ծառայողական համազգեստի առարկաների քանակությանը համապատասխան՝ հաշվի առնելով կրման ժամկետները:

Արդարադատության նախարարության  
Դատական ակտների հարկադիր կատարումն  
ապահովող ծառայության  
խորհրդանշանը



Ձև - 1



Գլխավոր և առաջատար  
խմբի ղեկավարն է

Ձև - 2



Բարձրագույն  
խմբի ղեկավարն է





ԱՆՆԱՅԻՆ-ՉՄԵՈՒՅԻՆ ՀԱՄԱԶԳԵՄՏ

Ձև 5



**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ  
ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

2021 թվականի հոկտեմբերի 18-ի

**ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ  
ԵՎ ԼՂՀ ՏԱՐԱԾՔԱՑԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՑԵՄԲԵՐԻ 03-Ի N 117  
ՀՐԱՄԱՆՆ ՈՒժԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 04-Ն

**ՀՐԱՄԱՆ**

Հիմք ընդունելով «Հավատարմագրման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածը՝

**ՀՐԱՄԱՑՈՒՄ ԵՄ՝**

1. Հաստատել հավատարմագրման վկայագրի ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել ԼՂՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների զարգացման նախարարության 2005 թվականի նոյեմբերի 03-ի «Մերտիֆիկացման մարմնի հավատարմագրման վկայագրի, փորձարկման լաբորատորիայի հավատարմագրման վկայագրի, սերտիֆիկացման մարմնի գործունեության մասին տվյալների, հարցաթերթի, փորձարկման լաբորատորիայի հարցաթերթի, լաբորատորիայի տեխնիկական անձնագրի ձևերը հաստատելու մասին» N 117 հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ  
ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

2021 թվականի հոկտեմբերի 18  
ք. Ստեփանակերտ

**ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՎԿԱՑԱԳԻՐ**

**ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ  
ՊԱՏԿԵՐԱՆԻՇԻ ՏԵՂԸ**

**ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ  
ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐ**

**ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ  
Վ Կ Ա Ց Ա Գ Ի Ր  
ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԳՐԱՆՑԱՀԱՄԱՐԸ՝ N° \_\_\_\_\_**

Սույն վկայագիրը հավաստում է, որ

\_\_\_\_\_ (իրավաբանական կամ ֆիզիկական անձի անվանումը)

Համապատասխանության գնահատման մարմնի գործունեության իրականացման վայր(եր)ը՝  
Համապատասխանության գնահատման մարմնի իրավաբանական անձի գտնվելու վայրը՝ համապատասխանում է

\_\_\_\_\_ (ստադիարտների և այլ նյութառիվ փատաթղթերի նշագրերը /կամ անվանում էրը)

պահպանվել են, հավատարմագրված է Հավատարմագրման ազգային մարմնի կողմից որպես

\_\_\_\_\_ (ՀԳՄ-ի անվանումը և տեսակը)

և իրավասու է իրականացնել աշխատանքներ՝ սույն վկայագրի անբաժանելի մաս հանդիսացող հավատարմագրման վկայագրի հավելվածում ամրագրված հավատարմագրման ոլորտի շրջանակներում

Հավատարմագրման ժամկետը.

Սկիզբը՝  
Ավարտը՝

Առաջին հավատարմագրման տարեթիվը՝  
Վերաձևակերպված է (Վերաթողարկված է)՝

Հավատարմագրման խորհրդի \_\_\_\_\_ (ստորագրությունը) \_\_\_\_\_ (անունը, ազգանունը)  
նախագահ՝

Կ.Տ.

Հավատարմագրման վկայագիրը անվավեր է առանց հավելված(ներ)ի:  
Արգելվում է սույն վկայագրի մասնակի վերարտադրումը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**ՀՐԱՄԱՆ**

15 հոկտեմբերի 2021թ.

ՆՀ-37-Ա

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՄԻ  
ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐՈՎ ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ  
ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐԻ  
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորող հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 15-ի N 381-ՏՆ եզրակացությունը՝

**Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ Ե Մ՝**

**1. Տրամադրել՝ ֆիզիկական անձ Այոշա Կամիսի Իսրայելյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՃՈՒԹՅԱՆ ՍՏՆՈՒԹՅԱՆ լիցենզիայի N00002 ներդիր:

**2. Դադարեցնել՝ ֆիզիկական անձ Այոշա Կամիսի Իսրայելյանի** Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՃՈՒԹՅԱՆ ՍՏՆՈՒԹՅԱՆ լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունը:

**3. Եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը** պաշտոնական տեղեկագիրը հրապարակող մարմնին:

**Հայկ Խանումյան**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

2021 թվականի հոկտեմբերի 21-ի

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ  
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 25-Ի N 52-Ն ԵՎ  
2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 160-Ն ՀՐԱՄԱՆՆԵՐՆ ՈՒԺԸ  
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 5-Ն

**ՀՐԱՄԱՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը.

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Ուժը կորցրած ճանաչել Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարի 2018 թվականի հունիսի 25-ի «Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող բնափայտի մթերման ծառայությունների գները հաստատելու մասին» N 52-Ն և 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող բնափայտի վերամշակման ծառայությունների գները հաստատելու մասին» N 160-Ն հրամանները:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հ. ԽԱՆՈՒՄՅԱՆ**

2021 թվականի հոկտեմբերի 21  
ք. Ստեփանակերտ



